



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

9 փետրվարի 2021 թվական

6-ԲԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

### ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 18.30

#### Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են  
ավագանու անդամ՝

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Տիգրան Գալստյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Սերգեյ Գյոզալյան՝ Երևանի ավագանու անդամ,

Անահիտ Ասատրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Պավել Սարգսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Գալջյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

#### Արման Անտոնյան

-Առաջին հարցս հետևյալն է՝ խնդրում եմ տեղեկացնել, թե ի՞նչ է լինում, երբ  
ավագանու որոշումը չի կատարվում կամ որոշումից բխող գործընթաց չի կատարվում: Ես

հետաքրքրվել եմ՝ տարբեր տարիներին չի եղել որևէ դեպք, երբ ավագանու որոշումները չկատարվեն, անտեսվեն:

Ի՞նչ է լինում այս դեպքում, երբ Երևանի ավագանին ընդունում է որոշում, սակայն չի սկսվում տվյալ որոշման կատարման տրամաբանական գործընթացը, այլ ճիշտ հակառակը՝ ուղղակի անտեսվում ու արհամարվում է երկար ժամանակ:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը:

### **Տարոն Մարգարյան**

-«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և որևէ այլ իրավական ակտով սահմանված չէ պատասխանատվության միջոց ավագանու որոշումը չկատարելու կամ որոշումից բխող որևէ գործողություն չկատարելու համար: Որպես այդպիսին իրավական պատասխանատվություն առկա չէ և եթե որոշման կատարումը ենթադրել է որևէ վարչության կողմից որևէ գործողության կատարում և իրականում տեղի է ունեցել անգործություն, ապա կարող է քննարկվել կոնկրետ պատասխանատու աշխատակցի աշխատանքային կարգապահության հարցը: Ինքնին ավագանու որոշումը չկատարելը դա պատասխանատվություն չի առաջացնում:

### **Արման Անտոնյան**

-Փաստորեն արձանագրում ենք, որ ավագանու որոշումը չկատարելը դա անգործության հետևանք է:

Երկրորդ հարցս հետևյալն է՝ 2019թ. փետրվարի 11-ին Երևանի ավագանու նիստում ընդունվել է հ.65-Ա որոշումը, որի նախագիծը պատրաստվել էր քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության կողմից: Նախագծի վերաբերյալ ես իմ դրական կարծիքն եմ արտահայտել՝ նշելով, որ կենդանաբանական այգում պետք է փոխել կառավարման մոդելը և պետք է ձևավորել կառավարման խորհուրդ:

Մեկուկես տարուց ավելի նույնիսկ կառավարման խորհրդի ձևավորման մեկնարկը տեղի չի ունեցել: Այդ ընթացքում գործընթացներ են տեղի ունեցել և 2020թ. սեպտեմբերի 8-ին, ընդամենը տվյալ գլխի հստակեցումներով, ընդունվեց նոր հ.271-Ա որոշումն այն մասին, որ Երևանի կենդանաբանական այգում այնուամենայնիվ պետք է ձևավորվի կառավարման խորհուրդ:

Ըստ կանոնադրության համապատասխան կետերի՝ կառավարման խորհուրդը պետք է ձևավորվեր 30 աշխատանքային օրվա ընթացքում: Այս ժամանակահատվածում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում կանոնադրության

փոփոխությունը գրանցված չէր: Այսքան այս հարցը բարձրաձայնելուց հետո միայն՝ 2020թ. դեկտեմբերին, կանոնադրության այս փոփոխությունը գրանցվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում: Սակայն այս պահի դրությամբ, Երևանի կենդանաբանական այգու կառավարման խորհուրդ ոչ միայն գոյություն չունի, այլ անգամ խորհրդի ձևավորման մեկնարկը չի տրվել: Ցանկանում եմ իմանալ, թե ինչու՞:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոն Մելքոնյանը:

### **Գայանե Մելքոն Մելքոնյան**

-Ցանկանում եմ արձանագրել, որ այդ որոշումը ծանր ընթացքով ընդունվեց, որովհետև ավագանու և գործադիրի միջև կային հակասություններ և ըստ էության գործադիր մարմնից բացասական կարծիք կար դրա նկատմամբ: Հարցը լինելով ավագանու գործառույթների շրջանակում՝ որոշումն ընդունվեց: Դրա իրագործման հետ կապված եղել են մտահոգություններ և այդ պատճառով ընթացք չի տրվել իրագործմանը: Այնուամենայնիվ, լինելով պարտադիր կատարման որոշում, դեկտեմբեր ամսին կանոնադրությունը գրանցվել է: Այժմ մենք նախատեսել ենք Ձեզ հետ համատեղ քննարկում՝ մտահոգությունները բարձրաձայնելու համար: Քննարկման արդյունքում կփորձենք համատեղ հասկանալ, թե որքանով են դրանք արդարացված կամ ոչ և գտնել դրա ելքը:

Իրավական առումով սա Ձեր հարցի պատասխանը չի: Պարզապես ես իրավիճակն եմ ուզում նկարագրել, կապված կառույցի և նրա գործունեության հետ որոշումն որոշակիորեն խնդրահարույց է: Այս պահին կարող եմ վստահորեն ասել, որ Ձեզ հետ առաջիկա օրերին կնախաձեռնենք հանդիպում և մանրամասն կքննարկենք:

### **Արման Անտոնյան**

-Շնորհակալություն տիկին Մելքոն Մելքոնյան: Մեծագույն հարգանքով իմ գործընկերների և առանձնապես Ձեր նկատմամբ, ուզում եմ ևս մեկ անգամ կրկնել, որ այս նախագիծը 2019թ. առաջարկվել է քաղաքապետարանի կողմից, ոչ թե ավագանու անդամի կողմից: Մա շատ կարևոր փաստ է: Ավագանու տարբեր անդամներ ընդամենը ողջունել են կամ չեն ողջունել, որն արդեն երկրորդական է:

Երևանի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 8-ի հ.271-Ա որոշման ընդունման գործընթացում Դուք ևս Ձեր բարի ու դրական մասնակցությունն ունեցել եք որպես Երևանի ավագանու անդամ: Նախագծի վերաբերյալ որպես իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ տվել եք դրական եզրակացություն: Երևանի քաղաքապետարանի իրավաբանական վարչության կողմից առաջարկված բոլոր փոփոխություններն ու

առաջարկներն առանց բացառության ընդունվել են նախագծի հեղինակի կողմից: Միակ խնդրահարույց հարցը կենդանաբանական այգին բնապահպանության թե մշակույթի և տուրիզմի վարչության համակարգման ներքո լինելն է: Նախագծի հեղինակի կողմից ընդունվեցին իրավաբանական վարչության բոլոր դիտողությունները, այնուամենայնիվ, մենք նորից տեսնում ենք խնդիր, որն ինձ շատ հարցերի տեղիք է տալիս:

Շնորհակալ եմ պատասխանի համար, ես անհամբեր կսպասեմ հանդիպմանը, սակայն ուզում եմ այժմ էլ բարձրաձայնել, որ դա որոշման վրա չի ազդելու: Այնուամենայնիվ կենդանաբանական այգին պետք է ունենա կառավարման խորհուրդ, որովհետև դա շատ բացառիկ, բազմաշերտ կառույց է: Ինչքան էլ այս կամ այն տնօրենը օժտված լինի գերբնական գիտելիքներով, այնուամենայնիվ, այդ կառույցը խիստ մասնագիտական կոլեգիալ որոշման անհրաժեշտություն ունի: Շնորհակալ եմ:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրեմ:

### **Արմեն Ներսիսյան**

-Պարոն քաղաքապետ, ե՞րբ ենք Վարդաշենի վթարային շենքի բնակիչների համար բնակարաններ կառուցելու:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը, խնդրեմ:

### **Սերգեյ Ներսեսյան**

-Շնորհակալություն հարցի համար, կոնկրետ Վարդաշենի վթարային շենքի բնակիչների համար ժամկետներ չեմ կարող ասել, բայց ընդհանուր վթարային բոլոր շենքերի մասով քննարկումներ են ընթանում, որպեսզի կարողանանք վերջնական եզրահանգման գալ: Քննարկումներից բացի, սկսել ենք փուլ առ փուլ հանդիպումներ կազմակերպել, արդեն հանդիպում ենք ունեցել Արցախի փողոցի շենքի բնակիչների հետ, վաղը կհանդիպենք նաև Արցախի փողոցի մյուս շենքի բնակիչների հետ: Փուլ առ փուլ ունենալու ենք հանդիպում նաև, Ձեր կողմից նշված, Վարդաշենի բնակիչների հետ: Վերջնական լուծում ունենալու դեպքում պաշտոնապես կհայտարարենք այդ մասին: Այս պահի դրությամբ խնդրին քաջատեղյակ ենք և զբաղվում ենք շատ մեծ ուշադրությամբ: Դա մեր առաջնային խնդիրներից է:

### **Արմեն Ներսիսյան**

-Պարոն Ներսեսյան, Արցախի փողոցի հ. 8 և հ. 10 շենքերի բնակիչներից, կարծեմ, 10 ընտանիք է մնացել, որ պետք է բնակարաններ հատկացնենք: Այնտեղ խնդիր կար. նրանց մեկ

սենյականոց բնակարան էր հասնում, իրենք պահանջում էին երկու սենյականոց բնակարաններ: Ճիշտ հասկացա այդ 10 ընտանիքի մասին է խոսքը. Արցախի փողոցի հ. 10 շենքի բնակիչների վերաբնակեցման հարցը լուծելուց հետո նոր կանդրատառնա՝ Վարդաշենի վթարային շենքի բնակիչներին:

### **Մերգեյ Ներսեսյան**

-Արցախի փողոցում հ. 10 և հ. 10/1 շենքեր գոյություն ունեն: Արցախի փողոցի հ. 10 շենքի մասով, այդ Դուք ճիշտ եք, այնտեղ մոտավորապես 10 ընտանիք է ապրում և ունենք 10 բնակարանի հարց: Ունենք խնդիր նաև Արցախի փողոցի հ. 10/1 շենքի հետ: Պարոն Ներսիսյան, հերթականությամբ, փուլ առ փուլ աշխատանքները տարվում են:

### **Արմեն Ներսիսյան**

-Շնորհակալություն պատասխանի համար, հույս ունեմ մինչև մարտի վերջ կվերջացնեք, որովհետև փոքրաքանակ ընտանիքներ են մնացել, որոնց հարցը պետք է լուծել: Ես անընդհատ զանգեր եմ ստանում Վարդաշենի բնակիչներից, ովքեր բողոքում են շենքի վիճակից:

### **Մերգեյ Ներսեսյան**

-Բնակիչների հետ անձամբ ես, մեր անձնակազմը, հանձնաժողովի անդամները մշտապես կապի մեջ ենք լինում: Մանրամասն ամեն ինչից տեղեկացված ենք:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

### **Անի Խաչատրյան**

-Առաջին հարցս կրկին վթարային շենքերին է վերաբերում, որը քաղաքի խոցելի կողմերից մեկն է: Ունենք 2-րդ և 3-րդ կարգի վթարային շենքեր, որոնք ենթակա են ամրացման: Ամրացման աշխատանքներ չկատարելու պատճառով՝ շենքը դառնում է 4-րդ կարգի վթարային և քանդվում է: Այդ ժամանակ հարց է առաջանում, թե ուր տեղավորենք այդ մարդկանց կամ ինչ անենք: Կոնկրետ Մարգարյան փողոցի հ. 31 հասցեում ամրացման խնդիր ունի 3-րդ կարգի վթարային շենքի 6-րդ մուտքը, որը քանդվում է: Ոչինչ չենք անում և թույլ ենք տալիս, որ խնդիրը խորանա:

Պարոն քաղաքապետ, Մարգարյան փողոց հ. 31 շենքի 6-րդ մուտքն ունի լուրջ վերանայման խնդիր, խնդրում եմ դրանով զբաղվել:

## Հայկ Մարության

-Ընդհանուր պատասխաններ Ձեր հարցին: Բարձրացված այս հարցերի մասին փորձում եմ չխոսել, իրականությունը չասել, որովհետև կարող է շատ ծանր լինի, սակայն երբեմն պետք է այդ իրականությունն ասել, որովհետև մենք հասուն մարդիկ ենք:

Հարգելիներս, առաջին հերթին, օրենքով եթե առաջնորդվենք, շենքերի խնդիրները շենքում բնակվող սեփականատերերի խնդիրներն են, իրենց սեփական շենքն է՝ մուտքով, ելքով, կտուրով: Ամեն մեկն իր տարածքով ունի Կադաստրում գրանցված սեփականության վկայական և ընդհանուր բաժնեմաս ամբողջ շենքում: Բնակարանի վաճառքի դեպքում ո՛չ քաղաքապետարանը, ոչ՝ պետությունը գումար չեն ստանում. օրենքն է այդպիսին:

Օրենքում հստակ նշված է, որ շենքի սեփականատերերը պետք է զբաղվեն շենքի ամրացմամբ և այն ամենով, ինչը հնարավոր է շենքի ներքին աշխատանքներում: Շենքից դուրս առաջացած խնդիրների լուծմամբ, այո, ճիշտ էք, պետք է զբաղվի համայնքը:

Գնանք երկրորդ փուլ, եթե անգամ որևէ գերատեսչություն պետք է զբաղվի այդ հարցով, դա ՀՀ կառավարությունն է, սա էլ ամրագրենք: Միայն դրանից հետո, երբ այդ երկու մարմինները ոչինչ չեն կարողանում անել կամ չեն ուզում անել, այդ ժամանակ համայնքը պետք է ինչ-որ բան իրականացնի կամ չիրականացնի: Օրենքով չպետք է իրականացնի, բայց մարդասիրությունից ելնելով կամ նույն քաղաքում գտնվելու հանգամանքով պայմանավորված, չգիտեմ, ինչպես կարելի է դա անվանել, փորձում ենք հարցին լուծում տալ: Ամեն դեպքում, այդպիսի լիազորություն և պարտականություն չունենք:

Ցանկություն կա օգնելու, սակայն լիազորություն և բյուջեով նախատեսված գումար չկա: Ստացվում է մեր լիազորություններն ու պարտականությունները պետք է չանենք, փոխարենը դա իրականացնենք: Այդ դեպքում մեզ կմեղադրեն մեր պարտականությունները չկատարելու համար: Երբեմն ստիպված միջամտում ենք և աշխատանքներ ենք կատարում, որովհետև մեծ քանակի շենքերի մասին է խոսքը: Նույն վերելակների հարցն է, պարզապես այս դեպքում քանակն է շատ: Մենք հիմա գոնե 520 շենքի բնակչի այդ գումարով կարողացել ենք օգնել, քանի որ իրենց կյանքին ամեն օր վտանգ էր սպառնում: Ես ընդունում եմ վթարային շենքերում ևս մարդու կյանքին վտանգ է սպառնում, պարզապես այս դեպքում այդ նույն գումարով, որ պետք է մեկ շենքի հարց լուծվեր, փոխարենը 520 շենքի հարց է լուծվել, որը նույնպես մեր լիազորությունների մեջ չէ: Եկեք օրենքում ընդգրկենք, ավագանու որոշմամբ էլ հաստատենք, որ դա նույնպես մեր պարտականությունն է և ամեն տարի բյուջեով գումար նախատեսենք շենքերի կառուցման համար:

Մեր գործն այս դեպքում պետք է լինի բնակֆոնդի ավելացումը, որպեսզի բնակֆոնդն ավելանա, գներն էժան լինեն և մարդիկ կարողանան տեղափոխվել այդ շենքեր: Այդ դեպքում

կարող է պետությունն էլ իրենց օգնի, ծրագրեր լինեն, բայց դա պետական ինչ-որ ծրագրի շրջանակում է լինում, համայնքն այդքան գումար չունի: Հիմա 2-3 շենքի մասին ենք խոսում, բայց 5-10 տարի հետո դրանք կարող են դառնալ հարյուրավոր շենքեր: Արդյունքում 5 տարի հետո գույքահարկ կլինի և 5 տարի անց գումարներ կգանձվեն: Եկեք հասկանանք, եթե նման լիազորություն և պարտականություն ենք մեզ վերապահում, օրենքով ամրագրենք և սկսենք աշխատանքներ իրականացնել:

#### **Անի Խաչատրյան**

-Պարոն քաղաքապետ, 2.5 տարի մենք համատիրությունների՝ շենքը կառավարող մարմնի, օրենքը չներկայացրեցինք Ազգային ժողով, չփոխեցինք, ոչինչ չարեցինք:

#### **Հայկ Մարություն**

-Տիկին Խաչատրյան, ամեն ինչ արել ենք, նախագիծը ներկայացրել ենք: Ինչ պատճառով այնտեղ ոչինչ չի արվել չեմ կարող ասել, կներեք, ես այդ գերատեսչությունների համար պատասխանատու չեմ: Մենք պատասխանատու ենք մեր կատարած աշխատանքի համար:

Ես կիսում եմ Ձեր մտահոգությունը, դրա համար մեր կարողության սահմաններում աշխատանքներ իրականացնում ենք: Դիմեք Ազգային ժողովի ձեր գործընկերներին, օրենքը փոխենք, ՀՀ կառավարությունը գումար հատկացնի, ծրագիրը գրենք, իրականացնենք:

#### **Անի Խաչատրյան**

-Երկրորդ հարցս հնչեցնեմ, որը մեր լիազորությունների շրջանակում է, պետք է իրականացրած լինեինք, բայց շարունակ չենք անում: Հայտարարված էր, որ մինչև հունվարի 31-ը Կադաստրային նախկին արժեքով ապօրինի շինարարություններն օրինականացնելու համար քաղաքացիները դիմումներ ներկայացնեին: 1000-ավոր քաղաքացիներ դիմեցին ապօրինի շինարարություններն օրինականացնելու համար: Ապօրինի շինարարություն ունեցող քաղաքացիներին տվեցինք առավելություններ, օրինական շինարարություն անել ցանկացող քաղաքացիներին առհամարում ենք: 2.5 տարվա մեջ քա՞նի աճուրդ ենք ունեցել ու քա՞նի հազար դիմում կա: Մի քանի տասնյակ դեպք ես գիտեմ, որ արդեն տարուց ավել է մարդիկ դիմել են աճուրդի համար ու այդ աճուրդները չեն կայանում: Կայացած աճուրդները շուկայական արժեքից բարձր արժեքներով են և ներդրողը պետք է 7-8 տարի սպասի, որպեսզի աճուրդների գները 5% նվազի, դառնա խելամիտ արժեք, կարողանա գնի և ներդրում իրականացնի: Ներդրում կատարողը ներդրում է անում նաև իր սեփական շահի համար:

Ի՞նչ ենք ուզում, չենք ուզում բյուջե գումար մուտք լինի, ի՞նչու աճուրդներ չեն կայանում, ու՞ր են քաղաքացիների դիմումները, որպեսզի կայանան աճուրդները, գնեն հողեր, ներդրումներ անեն:

Ամենակարևորներից մեկը՝ այն մարդիկ, ովքեր ունեն ինչ-որ տարածք, ենթադրենք, 1000 քմ տարածք, որի կողքը կա 100, 200 քմ տարածք, պարտադրում ենք դա գնել, որպեսզի տանք շինությունություն: Բավական չէ պարտադրում ենք, միևնույն ժամանակ սահմանում ենք ահավոր բարձր գին և տարիներով աճուրդի չենք ներկայացնում:

Ի՞նչու չեն կայանում աճուրդները, ի՞նչքան պետք է սպասեն մի տարի առաջ դիմում ներկայացրած քաղաքացիները:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը, խնդրեմ:

### **Սերգեյ Ներսեսյան**

-Տիկին Խաչատրյան, նախ անդրադառնամ Ձեր հարցման առաջին մասին. այն ինչ հայտարարված էր մինչև հունվարի 31-ը, դա վերաբերում էր ինքնակամ շինություններին, ոչ թե ապօրինի:

Ինչ վերաբերում է աճուրդների անցկացմանը. վերջերս ունեցել ենք գույքի աճուրդի մասով նիստ, իսկ հողի աճուրդի հետ կապված մենք ունենք օրենսդրական փոփոխություններ, որի արդյունքում իրավաբանական վարչությունում ներկայումս քննվում են համապատասխան փաստաթղթերը: Հաստատվելու դեպքում, կսկսենք աճուրդների անցկացման գործընթացը:

Ինչ վերաբերում է գներին. անցյալ անգամ էլ աճուրդների նիստի ժամանակ քննարկեցինք, որ, ցավոք սրտի, գինը գնահատողը լիցենզավորված ընկերություն է, որն իր գործունեությունը մրցույթի միջոցով է շահել: Հողի արժեքները սահմանում ենք կադաստրային արժեքների հիման վրա՝ այսինքն Կադաստրի կոմիտեում գրանցված նվազագույն, նորմալ և առավելագույն գինը: Դրա հիման վրա հանձնաժողովի նիստում, հանձնաժողովի անդամների միջոցով որոշում ենք գինը: Այստեղ անարդար գնային քաղաքականություն չեմ կարողանում պատկերացնել:

### **Անի Խաչատրյան**

-Պարոն Ներսեսյան, իմ ասածն այլ էր, այդ հանձնաժողովում գինը որոշվում է գրեթե առավելագույն արժեքով: Գնահատող կազմակերպությունը ևս նորմալ արժեքով չի գնահատում, բայց հանձնաժողովի նիստում, որը փոխքաղաքապետի գլխավորությամբ է տեղի ունենում, որոշվում է ամենաբարձր գինը, չգիտես ինչու, և այդպես մնում է:



Իմ ասածն այն է, որ եթե մի աճուրդի ընթացքում հողը չի վաճառվում, ինչու՞ ենք հաջորդ աճուրդներին նորից նույն գնով ներկայացնում՝ 5% նվազեցնելով: Դրա փոխարեն կարելի է սահմանել խելամիտ միջին գին, ներկայացնել այդ գնով, եթե այդ գնով ևս չի վաճառվում, սկսել 5% նվազեցնել: Մենք, գրեթե բոլորը, բարձր գներով ենք ներկայացրել:

Ինչ վերաբերում է իրավաբանական վարչության կողմից իրականացվող ուսումնասիրություններին, հնարավոր է այդ ուսումնասիրությունները տևեն մինչև այս իշխանության կառավարման ավարտը: Ասեք, որ մարդիկ իմանան, երբ կարող են աճուրդի մասնակցել:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը, խնդրեմ:

### **Տարոն Մարգարյան**

-Տիկին Խաչատրյան, հողային օրենսգրքում փոփոխություններ էին տեղի ունեցել, այդ փոփոխությունները տեղայնացնելու համար աճուրդների կարգում փոփոխություն կատարեցինք: Բացի այդ, վերջին շրջանում շատ փոփոխություններ կատարեցինք, ինչը պայմանավորված էր հանձնաժողովների նախագահների փոփոխությամբ: Մենք բացի պարոն Ներսեսյանի գլխավորած հանձնաժողովից, ունենք նաև հողամասերն աճուրդով օտարելու ընտրության հանձնաժողով: Այնտեղ նույնպես խնդիր կար, կապված աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի փոփոխության հետ: Հավատացեք, որ այդ ամենն անգործության հետևանք չէ, հիմնավոր պատճառներ են եղել:

### **Անի Խաչատրյան**

-Փաստենք, որ Երևանում ներդրումներ, աճուրդներ չեն լինում այն պատճառով, որ մենք ամեն օր մարդ ենք փոխում:

### **Մերգեյ Ներսեսյան**

-Անդրադառնամ նաև գնի նվազեցման հարցին: Ինչքան էլ ցանկանանք 5%-ից ավել նվազեցում չենք կարող անել, քանի որ օրենսդրությամբ առավելագույն տոկոսը, որ կարող ենք նվազեցնել՝ 5%-ն է:

### **Հայկ Մարության**

-Տիկին Խաչատրյան, եթե ամփոփենք այս հարցը, այո խնդիր կա, որ աճուրդները չեն կայացել: Այո, այդ խնդիրները միգուցե մեզ համար օբյեկտիվ են, բայց սուբյեկտիվ են դիմող կողմի համար: Ընդունում եմ դա և ինքս գիտակցելով խնդիրը, խոսել եմ պարոն Համբարյանի

և պարոն Ներսեսյանի հետ, հանձնարարել եմ հրատապության կարգով վերականգնել բոլոր հանձնաժողովների աշխատանքները և սկսել իրականացնել աճուրդները:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ԲԱՅԼԸ խմբակցության անդամ Տիգրան Գալստյան:

### **Տիգրան Գալստյան**

-Վերջին երկու-երեք ամիսների ընթացքում քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունն ստացել է մոտ 27.000 դիմում: Հարցս հետևյալն է՝ մենք ինչպե՞ս ենք կարողանալու այդ դիմումներին խելամիտ ժամկետում պատասխանել:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Վահե Բալասյանը:

### **Վահե Բալասյան**

-Աննախադեպ քանակի գրություններ ենք ստացել, ըստ վիճակագրության՝ մեկ ամսվա ընթացքում ստացել ենք մի քանի տարվա կտրվածքով դիմումների քանակ: Առաջարկվել է այդ դիմումներին պատասխանելու համար վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան աշխատակիցներին որոշ ժամանակով ներգրավել ճարտարապետության և քաղաքաշինության վարչության աշխատանքներին: Այս հարցը քննարկվում է՝ հասկանալու համար, թե որքանով նրանք կարող են կատարել այդ աշխատանքները: Մենք ներողություն ենք խնդրել մեր համաքաղաքացիներից դիմումների պատասխանների ուշացման համար, որովհետև դա անխուսափելի է այս պարագայում:

### **Տիգրան Գալստյան**

-Պարոն քաղաքապետ, ես կարծում եմ, որ մեր համաքաղաքացիները պետք է լսեին դա, որովհետև բոլորն այս պահին սպասում են, որ իրենց պատասխանները նշված ժամկետներում պետք է ստանան: Այդ պատճառով ես բարձրաձայնեցի, չնայած քննարկել ենք քաղաքապետի խորհրդական Դավիթ Ճգնավորյանի հետ: Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան բաժիններից աշխատակիցներին ճարտարապետության և քաղաքաշինության վարչության աշխատանքներին ներգրավելու առաջարկն արվել է իմ կողմից, որպեսզի այս պահին կարողանան արագ կազմակերպել պատասխանների տրամադրումը:

Երկրորդ հարցս հնչեցնեմ. մենք այսօր քննարկեցինք Դավիթ Համբարյանի կողմից ներկայացված աշխատակազմի կառուցվածքային փոփոխությունները: Ես կարծում եմ, որ

ունենք գերծանրաբեռնված վարչություններ՝ օրինակ ճարտարապետության և քաղաքաշինության և իրավաբանական վարչությունները:

Պարոն քաղաքապետ, անհրաժեշտ է արդյոք նշված վարչություններում լրացուցիչ հաստիքներ ավելացնել:

Աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում ստացվել է 27.000 դիմում, իրավաբանական վարչությունում՝ մոտ 1500 հայցադիմում: Իրավաբանական վարչության իրավաբանները շատ դեպքերում դատական նիստերին չեն կարողանում մասնակցել:

Չե՞ք կարծում, որ վարչական շրջանների ղեկավարները պետք է ունենան օգնականներ:

### **Հայկ Սարույան**

-Վարչական շրջանների ղեկավարների օգնականների վերաբերյալ բարձրացված հարցին զերծ կմնամ պատասխան ներկայացնել: Իրավաբանական, ճարտարապետության և քաղաքաշինության վարչություններն այսօր աշխատում են գերծանրաբեռնված ռեժիմով և դա փաստ է: Այս հարցին պետք է լուծում տրվի՝ դա կլինի հաստիքների ավելացմամբ կամ ժամանակավոր աշխատողներ ներգրավելով: Իրավաբանական վարչության պարագայում, պետք է երկարաժամկետ լուծում գտնել, որովհետև այդ վարչությունը միշտ գերծանրաբեռնված է: Ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունն այս պահին ծանրաբեռնված է և 27000 դիմումի ստացումն կապված է օրենսդրական փոփոխության հետ: Հետագայում, դիմումների քանակը նվազելու է և նախատեսվող փոփոխությունները նշված 27.000 դիմումի հիման վրա չպետք է դիտարկել: Մենք հաշվարկելու ենք մինչև 27.000 դիմումի ստացումը ինչ վիճակ է եղել և դրա հիման վրա կկատարենք փոփոխություններ: Այս ընթացքում ժամանակավոր լուծում կտրվի, բայց դա չպետք է լինի երկարատև:

Հաստիքացուցակի վերաբերյալ քննարկումների ժամանակ միշտ առկա են խոսակցություններ, որ ավել գումար է վճարվում, հաստիքացուցակն ուռճացվում է և ինչ սկսվել է օպտիմիզացիան անընդհատ հաստիքացուցակը ավելանում է: Հաստիքների փոփոխություններ կատարելու ժամանակ այս խոսակցությունները և՛ օբյեկտիվ են, և՛ սուբյեկտիվ: Որևէ վարչությունում հաստիքներ ավելացնելու դեպքում, պետք է մեկ այլ վարչությունում կամ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում իրականացնենք կրճատումներ: Պետք է լուծումներ գտնել:

### **Տիգրան Գալստյան**

-Պարոն քաղաքապետ, բայց ճարտարապետության և քաղաքաշինության վարչության մասով այդ 27.000 դիմումի պատճառով չեմ ասում: Անցած և դրան նախորդող տարիներին

նույնպես եղել են պատասխանների ուշացումներ ու կրկին հաստիքների սղության պատճառով, ես այդ պատճառով եմ անդրադառնում հաստիքների ավելացմանը:

### **Հայկ Մարության**

-Պարոն Գալստյան, մենք պարոն Դավիթ Ճգնավորյանի հետ աշխատում ենք այդ խնդիրները լուծելու համար, ոչ թե 27.000 դիմումի կապակցությամբ, այլ մենք քննարկում ենք ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հաստիքացուցակի փոփոխությունների հարցը:

### **Տիգրան Գալստյան**

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ: Խոսակցություններ միշտ կլինեն, բայց քաղաքապետարանի ՕԳԳ-ն բարձրացնելու համար պետք է կատարել հաստիքացուցակի լրացուցիչ փոփոխություններ:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

### **Մարկոս Հարությունյան**

-Անցյալ տարի, երբ խոսքը վերաբերում էր վթարային շենքի բնակիչների համար նոր շենք կառուցելուն, Դուք ասել էք, որ այո՛, մենք գնում ենք այդ գործընթացին: Իմ համար շատ զարմանալի էր այն փաստը, որ Դուք մտածում էք շենքը բնակիչների սեփականությունն է և ըստ օրենքի՝ Դուք որևէ գործողություն չունեք անելու, այլ դա բարի կամքի դրսևորում է: Այդ նույն հաջողությամբ կարող էիք վերելակներն էլ չփոխել: Մի մեղադրեք վարչական շրջանների ղեկավարներին, որ շենքի տանիքում ապօրինի շինարարություն է կատարվում, մարդկանց սեփականությունն է ինչ ուզում անում են՝ այդ տրամաբանությամբ դիտարկեք: Այն դեպքում, երբ քաղաքացին ապօրինի շինարարություն է իրականացրել, Դուք իրավասություն ունեք քանդելու, մյուս դեպքում, երբ Դուք պետք է քայլ անեք և այդ մարդուն բնակարանով ապահովեք՝ ասում էք, որ իրավասու չեք:

### **Հայկ Մարության**

-Այո՛, օրենքով այդպես է:

### **Մարկոս Հարությունյան**

-Պարոն քաղաքապետ չի կարող այդպես լինել: Դուք մեղադրում եք նախկին իշխանություններին, որ նրանք կոռումպացված էին, վատն էին, բայց ի տարբերություն Ձեզ, նախկինները գոնե 10 նոր շենք են կառուցել և դրանով 20 կամ 30 վթարային շենքի բնակիչների բնակարանային հարց են լուծել: Այդ ամենն ասելուց առաջ, գոնե ասեք, որ նախկիններն այդ մի հարցում ձեզանից լավն էին:

Ես ամենևին այդ կարծիքը չեմ կիսում: Դուք այս Երևանի քաղաքապետն եք և Դուք պարտավոր եք քաղաքացիների անվտանգության մասին մտածել՝ և վերելակների, և՛ շենքերի, և՛ տանիքների, և՛ նկուղների, և՛ ասֆալտապատման աշխատանքների մասով: Յուրաքանչյուր հարց Ձեր պարտականությունների մեջ է: Օրենքով ամրագրված չլինելու պատճառով մի քանի ամիս առաջ ասում էի, որ գուքահարկը բարձրացվում է, օրենքի ուժով վերցրեք այդ պատասխանատվությունը Ձեզ վրա, որ հետո չասեք, թե դա Ձեր բարի կամքի դրսևորումն է:

Ինչ վերաբերում է, գումարների ձեռքբերմանը, ապա գումարների վերաբերյալ մենք առաջարկներ ներկայացրել էինք: Քաղաքապետարան մուտքագրված ինքնակամ շինությունների օրինականացման վերաբերյալ 27.000 դիմումից առնվազն 7000 դիմումի վերաբերյալ օրինականացման որոշում կայացնելու դեպքում մոտավորապես 7 մլրդ դրամ գումար կմուտքագրվի բյուջե: Երեք տարի աշխատանք կկատարվի և մինչև 2026թ. գույքահարկի վերջնական տեսքը կունենաք և քաղաքի բյուջեն գույքահարկի մասով 27 մլրդի փոխարեն կկազմի 150 մլրդ:

Խնդրում եմ պատասխանեք՝ պարտավորվում ե՞ք շենք կառուցել վթարային շենքերի բնակիչների համար, թե ոչ:

#### **Հայկ Մարության**

-Ես արդեն պատասխանել եմ. մենք գործում ենք մեր լիազորությունների և պարտականությունների շրջանակներում և փորձում ենք գործել մեր լիազորություններից դուրս հնարավորության սահմաններում:

#### **Մարկոս Հարությունյան**

-Այսինքն անցյալ տարի այն ինչ պայմանավորվել ենք, դա կյանքի կոչվելու է, թե՞ ոչ:

#### **Հայկ Մարության**

-Եթե որոշվել է ինչ-որ աշխատանք իրականացնել, ապա դա կատարելու ենք: Մենք խոսում ենք Արցախի փողոցի հ.8, հ.10, հ.10/1 շենքերի մասին: Այս մասով մենք վերցրել ենք պարտավորվածություն և կատարում ենք: Ձեր կողմից նշված շենքերի հետ կապված՝ շատ լավ գիտեք, որ աշխատանքներ ենք տանում, բայց մեզ վրա այդ աշխատանքները չենք կարող վերցնել: Մենք աշխատանքներ ենք տանում այն ուղղությամբ, որ դա իրականացնենք: Ես դիմել եմ կառավարություն, խնդրել եմ, որ գումարներ տրամադրեն, որը մերժվել է: Մենք շարունակում ենք աշխատանքները, փորձում ենք գտնել մասնավոր ընկերություն, որը մեզ հետ կհամագործակցի: Այսինքն այդ ուղղությամբ անընդհատ անում ենք մի աշխատանք, որը օրենքով մեզ վերապահված չէ և մենք չունենք պարտականություն և լիազորություն: Այս

աշխատանքները մեն կատարում ենք մեր լիազորություններից ու պարտականություններից դուրս: Եթե մենք չենք ուզում ընդունել օրենքը, ես չեմ կարող ձեզ օգտակար լինել:

#### **Մարկոս Հարությունյան**

-Այսինքն անում ենք, որովհետև հասկանում ենք, որ ինքնակամ շինությունների օրինականացման գործընթացի եկող գումարները մեզ թույլ կտան այդ գործընթացը կյանքի կոչելուն:

#### **Հայկ Մարության**

-Մենք անում ենք այն, ինչ օրենքով մեզ վերապահված է, դրանից դուրս ինչ հնարավոր կլինի, այն կարվի:

#### **Մարկոս Հարությունյան**

-Այդ դեպքում ինչու՞ եք շենքի տանիքին տուն կառուցած բնակչի տունը ապամոնտաժում:

#### **Հայկ Մարության**

-Որովհետև դա մտնում է «ինչ կարողանում ենք, այն էլ անում ենք» արտահայտության մեջ:

#### **Մարկոս Հարությունյան**

-Ամեն դեպքում Ձեր պատասխանները չեն ընդունվում իմ կողմից: Մենք հետո առանձին քննարկում կունենանք:

Երկրորդ հարցս վերաբերում է ինքնակամ շինությունների օրինականացման համար քաղաքապետարան մոտքագրված այս աննախադեպ քանակին՝ 27.000 դիմումին:

Ի՞նչ մոտեցում է լինելու Ձեր կողմից, քանի՞ փուլի է բաժանվելու աշխատանքները՝ սկզբից սեփական տարածքների մեջ ներառված ինքնակամ թե՞ համայնքային հողի վրա կառուցված ինքնակամ շինություններն են օրինականացվելու:

#### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Վահե Բալասյանը:

#### **Վահե Բալասյան**

-Նախ նշեմ, որ 27.000 թիվը պայմանական է, դեռ վերջնական մուտքագրումները չկան: Այս պահին վարչություն մուտքագրվել է մոտ 5000 դիմում և նախապատրաստվել է մուտքագրման մոտ 10.000 դիմում: Դեռևս վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերից ստացվող դիմումներ կան, հստակ թիվ այս պահին ասել չենք կարող, դա մոտավոր թիվ է: Նշեմ, որ 2020թ. վարչություն մուտքագրվել է ընդամենը 2600 դիմում և մեկ

ամսվա ընթացքում ստացված այդ 27.000 դիմումը մի քանի տարվա դիմումների քանակ է: Նշեմ, որ մոտեցումը չի փոխվել: Դիմումները դիտարկելու են պրոֆեսիոնալ աշխատակիցներ՝ քաղաքաշինական տեսակետից, պարզելու են խախտվում է որևէ նորմ, թե ոչ, գնահատվելու է նաև շենքի սեյսմիկ վիճակը և տրվելու են պատասխաններ: Դիմումները քննարկվելու են ըստ դիմումների մուտքագրման հերթականության:

### **Մարկոս Հարությունյան**

-Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ Երևանի ավագանու անդամ Սերգեյ Գյոզալյան:

### **Սերգեյ Գյոզալյան**

-Ես ուզում եմ անդրադառնալ այն խնդրին, թե ինչու՞ են բնակիչներն իրենց շենքի տանիքներում ապօրինի շինություններ կառուցում: Ես մի քանի դիմումներ եմ ստացել քաղաքացիներից, ովքեր դժգոհում են, որ շինարարության թույլտվություն ստանալն անհնարին է, որովհետև «Բազմաբնակարան շենքերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի մեկնաբանման և կիրառման խնդիրներ են առաջանում: Խոսքը վերաբերում է նրան, որ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի մի մասի առանձնացման կամ օտարման համար անհրաժեշտ է բնակիչների 100 տոկոսի համաձայնությունը, իսկ կառուցապատման համար՝ 2/3-ի համաձայնությունը: Գործնականում 100 տոկոս բնակիչների համաձայնություն ստանալն անհնարին է:

Ես կարծում եմ, որ շենքի տանիքին մանսարդ կառուցելը դա այնքան էլ վատ երևույթ չէ, եթե պահպանվում են սեյսմիկ անվտանգության կանոնները, ճարտարապետական տեսքը: Պատմամշակութային առումով խնդիրներ չառաջանալու դեպքում ողջունելի է, որովհետև լուծվում է բնակֆոնդի խնդիր, մարդկանց համար աշխատատեղեր են ստեղծվում՝ շենքի տանիքի շինարարության գործում: Հաճախ այդ շինարարություններն իրականացվում են արտագնա աշխատանքի արդյունքում ձեռքբերված գումարներով:

Հարցս հետևյալն է՝ արդյոք կատարվում են ինչ-որ քայլեր, որպեսզի օրենքի այդ հոդվածի դրույթները համապատասխանեցվեն մեր իրողություններին կամ ավելի դյուրինացվի օտարման գործընթացը: Եթե մարդն ապրում է շենքի վերջին հարկում, իր տանիքը կառուցապատելու համար մյուս մուտքի առաջին հարկի բնակչի համաձայնություն ստանալու պահանջն անտրամաբանական է:

### **Հայկ Մարության**

-Շատ ճիշտ հարցադրում հնչեցրեցիք: Չգիտեմ ինչքանով եք հետևել քաղաքապետարանի այս երկու տարվա աշխատանքներին: Մենք աշխատանքների սկզբից

հայտարարել ենք շատ հետաքրքիր ծրագիր՝ նշելով, որ մենք ողջունելու ենք բոլոր այն 5-6 հարկանի շենքերի բնակիչների դիմումները, որով նախատեսվելու է մանսարդային հարկի կառուցում՝ ամբողջությամբ նույն ոճի մեջ և տվյալ միջավայրին համապատասխան: Մենք ամեն ինչ անելու ենք, որ մաքսիմալ արագ այդ շինթույլտվությունները տրվեն և մարդիկ սկսեն կառուցել:

Այո՛, ճիշտ էք, դրանով մենք լուծում ենք բնակֆոնդի հարցը, դրանով մենք վերանորոգում ենք ամբողջ շենքի կտուրը: Այսինքն երկար տարիներ այդ շենքի բնակիչները խնդիրներ չեն ունենա: Այս ծրագրի մասին հայտարարվեց և մենք շատ լուրջ օրենսդրական խնդիրներ ունեցանք: Միևնույն է, եթե անգամ ամբողջ շենքի բնակիչները դիմում են վերին հարկը՝ որպես մանսարդ վերակառուցելու համար, լինում են մեկ-երկու բնակիչ, ովքեր համաձայնություն չէին տալիս:

Տարբեր քննարկումներ են եղել տարբեր մեկնաբանություններ, բայց օրենսդրությամբ շատ հստակ է նշված այդ 100 տոկոսը: Ասեմ ավելին՝ ոչ թե 100 տոկոս բնակարանների, այլ 100 տոկոս սեփականատերերի համաձայնությունն է պետք: Այսինքն, եթե բնակարանն ունի հինգ սեփականատեր, բոլորի համաձայնությունն է պետք: Դրա համար պետք էր օրենսդրական փոփոխություններ կատարվեին: Մենք գրել ենք այդ փոփոխությունները: Դրա ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը:

### **Տարոն Մարգարյան**

-Մենք այդ նախագիծը մշակել ենք և շրջանառության մեջ ենք դրել: Այս պահին Ազգային ժողովում պատգամավորները, որպես իրենց սեփական նախաձեռնություն, կրկին այդ հարցը քննարկում են, որ բաժնային սեփականության իրավունքով պատկանող թե՛ հողամասում, թե՛ շենքում որևէ բաժնեմասի փոփոխություն կատարվի սեփականատերերի 2/3-ի համաձայնությամբ: Սակայն այնտեղ խնդիրներ կային ոչ միայն օրենքի հետ կապված, այլ նաև Սահմանադրության և Հայաստանի կոդից ստորագրված միջազգային պայմանագրերում: Այսինքն՝ սեփականատերն ունի այդ բաժնային սեփականությունը և դրա օտարումն առանց իր համաձայնության խնդիր է առաջացնում: Այժմ քննարկվում է տարբերակ, որ հնարավորություն ունենան այդ կառուցապատումն անեն, սակայն շենքի տակի հողամասի նկատմամբ իրավունք ձեռք չբերեն, այսինքն, որ հարևանի իրավունքը չնվազեցվի, բայց դեռ քննարկումների փուլում ենք:



### **Հայկ Մարության**

-Այսինքն այդ ճանապարհին անցել ենք: Այս հարցը բարձրացրել ենք 2019թ., առաջարկներն ուղարկել ենք կառավարություն, բայց մի գերատեսչությունում կանգ է առել և շարունակություն չի ստացել: Հրավիրել ենք Ազգային ժողովի մեր գործընկերներին և բազմաբովանդակ խորհրդակցություն ենք ունեցել: Իրենք էլ ասացին, որ կգրադվեն, հավանաբար դա է հետևանքը, որ արդեն Ազգային ժողովում քննարկվում է: Չգիտեմ որքանով կհասնենք հաջողության, բայց այն, որ 2019թ. սկզբից մենք դրանով զբաղվում ենք, սա ուզում եմ արձանագրենք: Ցավոք սրտի, ամեն ինչ չէ պետական համակարգում արագ կատարվում:

### **Մերգեյ Գյոզայան**

-Արձագանքեմ, պարզապես նոր այդ լուծումն իմ մտքում ծագեց, չգիտեմ, թե ինչպես կմեկնաբանվի: Եթե կառուցապատումն, այնուամենայնիվ, բնակիչների 2/3-ի համաձայնությամբ է արվում, ապա քաղաքապետարանը կարող է, որպես բարի կամքի դրսևորում, թույլ տալ այդ 2/3-ի համաձայնությամբ՝ առանց օտարման, իրականացվի կառուցապատում, իսկ օրենսդրական փոփոխություններից հետո բնակիչները կարողանան օրինականացնել և դառնալ սեփականատեր: Դա և՛ տնտեսական ակտիվության խթան կհանդիսանա, և՛ շենքերի արտաքին տեսքը կբարեկարգվի:

### **Հայկ Մարության**

-Լավ առաջարկ էք անում, բայց եթե օրենքը դրա մասին չէ, նշանակում է մենք դրա իրավունքը չունենք:

### **Մերգեյ Գյոզայան**

-Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Անահիտ Ասատրյան:

### **Անահիտ Ասատրյան**

-Պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է Երևան քաղաքի սանիտարական մաքրությանը:

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը կարծեմ ունի 350 հավաքարարի հաստիք, որն ինչպես երևում է բավարար չէ քաղաքի մաքրությունն ապահովելու համար: Այս ամենն առավել ակնհայտ դարձավ, ձյան առատ տեղումների ժամանակ: Այդ օրերին գտնվել եմ մի շարք վարչական շրջաններում և տեսել եմ, որ գլխավոր փողոցները մաքրվում են: Բողոքներ եղան, որ չեն մաքրվում բակային տարածքները և երկրորդային փողոցները: Զանգարահարել եմ մի շարք համատիրություններ,

ինձ ասել են, որ համատիրությունների կողմից մաքրվում են միայն աստիճանավանդակները և մոտակա 1 մետր հեռավորությամբ տարածքները:

Ձեր շրջայցերի ժամանակ տնտեսվարողներին տեղեկացրել եք, որ Երևան քաղաքի ավագանու 02.12.2009թ. N48-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ տնտեսվարողները պարտավոր են մինչև մայթեզր ապահովել իրենց հարակից տարածքի մաքրությունը:

Խնդրում եմ քաղաքացիներին, համատիրություններին և շահառուներին ևս մեկ անգամ պարզաբանել իրենց իրավունքները և պարտականությունները:

### **Հայկ Մարության**

-Ցանկանում եմ ձյան տեղումների ժամանակ կատարված աշխատանքը գնահատել՝ նշելով կատարված աշխատանքի առավելությունները և բացթողումները:

Ձյան առատ տեղումների ժամանակ գտնվել եմ մի շարք երկրներում և հետևել եմ ձնամաքրման աշխատանքներին: Օրինակ՝ Գերմանիայում ձյան տեղումների ժամանակ առաջացել է տրանսպորտային կոլապս: Երևան քաղաքում տրանսպորտային կոլապս չի եղել: Մայրաքաղաքի գլխավոր և երկրորդական փողոցները մաքրվել են: Իմ գոհունակությունն եմ հայտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության, վարչական շրջանների ղեկավարների, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից կատարված աշխատանքից: Դժգոհ եմ տնտեսվարողների և համատիրությունների հետ տարվող աշխատանքից, որի վերաբերյալ տեղեկացրել եմ վարչական շրջանների ղեկավարներին: Քննարկման արդյունքում վարչական շրջանների ղեկավարներին տրվել են հանձնարարականներ: Բացի այդ, Երևանի քաղաքապետի խորհրդական Արթուր Սարգսյանի ղեկավարությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը հատուկ աշխատանքներ է տանում տնտեսվարողների և համատիրությունների հետ:

Անդրադառնալով բակային տարածքների մաքրման աշխատանքներին, նշեմ, որ օրենքով սահմանված կարգով համատիրությունների հաշվեկշռում են գտնվում տվյալ շենքից մինչև 1.5 մետր հեռավորությամբ տարածքները, մնացած հատվածները համարվում են ընդհանուր: Այս ձևով ընթացքում ձյան առատ տեղումներ եղել են 2-3 օր: Ես՝ որպես Երևանի քաղաքապետ, սխալ եմ համարում ձնամաքրման աշխատանքների համար 2-ից 4 անգամ ավել գումար ծախսել՝ ստեղծելով հսկայական թիմ, որն առավելագույնը 5 օր պետք է մաքրի բակային տարածքներն ու մայթերը: Գտնում եմ, որ պետք է հիմնվել միջազգային փորձի վրա, այսինքն՝ քաղաքային կազմակերպությունների կողմից մաքրվեն գլխավոր և երկրորդական փողոցները,

մայթերը, որտեղ տնտեսվարողներ չկան, իսկ մնացած տարածքները մաքրեն մարդիկ կամ համատիրությունները:

Օրինակ՝ աղբահանության վճարը կազմում է 200 ՀՀ դրամ, որը բավականին ցածր գումար է այլ երկրներում սահմանված վճարների համեմատ:

Հնարավոր չէ պայմանագրային հիմունքներով ստեղծել ընկերություն, որը տարվա ընթացքում՝ 4-ից 5 օր, ձյան տեղումների ընթացքում պետք է կատարի ձնամաքման աշխատանքներ: Քանի որ այդ ընկերությունը պետք է 3-ից 4 ամիս վարձատրի աշխատակիցներին, տարվա ընթացքում ձնամաքման աշխատանքներ կատարելու համար: Օրենսդրությամբ հստակ սահմանված չէ, որ բակային տարածքները պետք է մաքրեն համատիրությունները: Օրենսդրությամբ հստակ սահմանված է, որ տնտեսվարողները պետք է կատարեն ձնամաքման աշխատանքները՝ մինչև եզրաքար, առանձնատների սեփականատերերը պետք է մաքրեն իրենց առանձնատների հարակից տարածքները: Բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների վերաբերյալ սահմանում չկա: Տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ բակային տարածքներում բավարար չափով ձնամաքման աշխատանքներ չի կարող տեղի ունենալ: Համեմատական կարգով, պետք է նշեմ, որ այսօրվա դրությամբ բակային տարածքներն ավելի լավ են մաքրվում, այսինքն պրոգրես կա: Սակայն այդ ամենը մեր պատկերացումների հետ չի համընկնում: Ուստի՝ պետք է աշխատանքները կատարել մեր ֆինանսական միջոցների սահմաններում: Օրենսդրության փոփոխության անհրաժեշտություն կա՝ պետք է բակային տարածքների մաքրման աշխատանքները կատարվեն բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների կողմից:

### **Անահիտ Ասատրյան**

-Երկրորդ հարցը՝ տնտեսվարողների կողմից հարակից տարածքները չմաքրելու դեպքում սահմանված է արդյոք տուգանք և հնարավոր է ընդունել Երևանի ավագանու որոշում՝ բակային տարածքները բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների կողմից մաքրելու վերաբերյալ: Մայրաքաղաքում կան լքված սեփական տարածքներ, որոնք վերածվել են աղբավայրի: Օրինակ՝ ինձ են դիմել Ղ. Փարպեցու փողոցի բնակիչները և նշել են, որ փողոցում կա սեփական տարածք և այն վերածվել է աղբավայրի: Այս հարցը ինչպե՞ս կարելի է կարգավորել:

### **Հայկ Մարության**

-Միակ և ճիշտ լուծումն է՝ աղբ չթափել նման տարածքներում: Միջազգային փորձի հիման վրա կարող եմ ասել, որ անհրաժեշտ է ունենալ վերահսկողական մեխանիզմ և սահմանել բարձր տուգանք: Այստեղ դա չի կիրառվում: Հստակ արձանագրում եմ, որ Երևան քաղաքում երբևիցե այս քանակությամբ աղբաման չի տեղադրվել: Օրինակ՝ Լեռնի փողոցում կա հասված,

որտեղ մարդիկ աղբը գցում են գետնին, իսկ 15 մ հեռավորության վրա տեղադրված է 4 աղբաման: Ներկայացրած օրինակի վերաբերյալ կա տեսագրություն, որը շուտով կիրառարակվի: Լեռնի փողոցի այդ հատվածն ամեն օր մաքրվում է: Այսինքն Ձեր կողմից բարձրացված հարցի լուծումը տուգանքներ և խիստ պայմաններ սահմանելն է, որի համար ռեսուրս չունենք:

Մենք գնել ենք եվրոպական արտադրության որակյալ, կափարիչով աղբամաններ: Գործակարգավարական խորհրդակցության ընթացքում հանձնարարել եմ փակել աղբամանների կափարիչները՝ զարշահոտությունը վերացնելու համար: Հանձնարարականից հետո, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրենը տեղեկացրեց, որ մարդիկ աղբը գցում են աղբամանների կողքին: Այս հարցի կարգավորման համար անհրաժեշտ է նաև ոստիկանության աջակցությունը: Պետք է նշեմ նաև, որ մայրաքաղաքի փողոցներում պարբերաբար մաքրում են բեռնատար մեքենաներից թափվող հողն ու ավազը: Այս հարցի կարգավորման համար անհրաժեշտ է ճանապարհային ոստիկանության հսկողությունը, որը չի արվում: Վստահ եմ, որ ոստիկանության ներկայացուցիչները կնշեն հսկողության չիրականացման պատճառները:

#### **Անահիտ Ասատրյան**

-Ձեր վաղեմի առաջարկը՝ մունիցիպալ ոստիկանություն ունենալն անհրաժեշտ է:

#### **Հայկ Մարության**

-Տիկին Ասատրյան, առաջարկն արվել է:

#### **Անահիտ Ասատրյան**

-Անդրադառնալով եվրոպական երկրների փորձին, նշեմ, որ օրինակ՝ Գերմանիայում աղբամանները տեղադրվում է շենքերի բակերում: Միայն վայրում աղբ թափելու դեպքում բոլոր բնակիչները հավասարաչափ տուգանվում են:

#### **Հայկ Մարության**

-Երևան քաղաքի բակային տարածքներում աղբամաններ տեղադրելը խնդրահարույց է, քանի որ մարդիկ չեն համաձայնվում:

#### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան:

#### **Սաթենիկ Մկրտչյան**

-Հարցս վերաբերում է Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող քաղաքաշինական փաստաթղթեր ստանալու վերաբերյալ ներկայացված հայտերի ուսումնասիրության խորհրդակցական խորհրդի կազմավորման գործընթացին, որի վերաբերյալ Երևանի ավագանու կողմից նախորդ նիստում ընդունվել է որոշում:

Խնդրում եմ պարզաբանել ի՞նչ փուլում է այդ գործընթացը:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի խորհրդական Դավիթ Ճգնավորյանը:

### **Դավիթ Ճգնավորյան**

-Հույս եմ հայտնում, որ ամենաուշը մեկուկես ամսվա ընթացքում խորհուրդը կգործի, շուտով հայտարարությունը կտեղադրվի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջում: Խորհրդի գործունեության համար նախապատրաստվում է հիմնական աշխատասենյակը, որը նախկինում ծառայում էր որպես Երևանի գլխավոր ճարտարապետի աշխատասենյակ: Նշված աշխատասենյակում խորհուրդն իր գործունեությունը կծավալի շաբաթը 2-3 անգամյա ռեժիմով:

### **Մաթենիկ Մկրտչյան**

-Ցանկանում եմ, որ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջում միայն հայտարարությունը տեղադրելով չբավարարվենք, այլ ավելի ակտիվ աշխատանք տանել ճարտարապետական համայնքի հետ: Անհրաժեշտության դեպքում կարելի է հատուկ անդրադարձ կատարել Հանրային հեռուստաընկերության միջոցով: Այս գործընթացի իրագրելումն անհրաժեշտ է կատարել առավել ծավալուն:

### **Դավիթ Ճգնավորյան**

-Ճարտարապետական համայնքի հետ աշխատանքներ տարվում են ամենօրյա ռեժիմով:

### **Մաթենիկ Մկրտչյան**

-Երկրորդ հարցը. գիտեմ, որ Երևանի քաղաքապետարանում տեղային, հատվածական աշխատանքներ է տարվում զինվորների և նրանց ընտանիքների՝ պատերազմի հետևանքով առաջացած խնդիրների լուծման համար: Հասկանալի է, որ պետական քաղաքականությունը դեռ պետք է հասկանա, թե պատերազմի հետևանքով առաջացած խնդիրների վերացնելու համար աշխատանքներն ինչպես կազմակերպել: Կարծում եմ այս մարդկանց առավել հասցեական օգնելու համար անհրաժեշտ է Երևանի քաղաքապետարանում ստեղծել աշխատանքային խումբ, որն ինչ-որ ձևաչափով պետք է արձանագրի այն հարցերը, որոնց հետ առնչվել է աշխատակազմը: Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը հետևողական է և հանձնաժողովի կողմից բյուջեի վերաբերյալ ներկայացվել է առաջարկ: Կարծում եմ, որ անհրաժեշտ է առավել համակարգված արձանագրել հարցերը, որպեսզի աշխատանքն արդյունավետ լինի:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն անդամ Պավել Սարգսյան:

## **Պավել Սարգսյան**

-Հարցս վերաբերում է տրանսպորտի բնագավառին: Այս տարի պետք է կայանա 3 մրցույթ: Խնդրում եմ այդ մասով նշել այն երթուղային գծերը, որոնք կլրամշակվեն կամ այլևս գործունեություն չեն իրականացնի: Խնդրում եմ առավել մանրամասն ներկայացնել փոփոխությունները և նշված 3 մրցույթի հաջորդական փուլերի ընթացքն ինչպե՞ս եք պատկերացնում:

## **Հայկ Մարության**

-Այս պահի դրությամբ երթուղային գծերի վերաբերյալ տեղեկատվություն չենք կարող տալ: Առկա է ՀՀ կառավարության որոշումը՝ 15 տարին անց միկրոավտոբուսներն այլևս չեն կարող շահագործվել: Քննարկվում էր մեկ տարի այդ ժամկետն երկարաձգել, որը չարվեց: Առաջիկա եռամսյակում կամ կիսամյակում մոտ 250 միկրոավտոբուս շահագործումից դուրս կգա, իսկ մինչև տարեվերջ կարծում եմ բոլոր միկրոավտոբուսները դուրս կգան շահագործումից: Ունենք 100 կոմպակտ դասի ավտոբուս, որոնց մասով մրցույթն արդեն կայացել է, պայմանագիրը կնքվել է և մատակարարումը տեղի կունենա մինչև մարտի վերջ: Տնտեսվարողը մինչև մարտի վերջ պարտավորվել է բերել ավտոբուսները, այլապես կտուգանվի: Պետք է մատակարարումը տեղի ունենար ավելի շուտ, սակայն կորոնավիրուսային համավարակի պատճառով աշխատանքները ժամանակին չկատարվեց: Պայմանագրում ժամկետները նախատեսված են մինչև մարտի վերջ:

Ունենք 161 ավտոբուս՝ մեր կողմից սահմանված պայմաններով՝ 8.5 մ երկարությամբ և ցածր հատակով, որոնց մասով մրցույթն ընթացքի մեջ է: Վերջնական հարցերը լուծելուց և պայմանագիրը կնքելուց հետո կհայտարարենք: Այս պահի դրությամբ դրական գործընթաց է ընթանում: Մոտակա օրերին ևս 135 ավտոբուսի՝ 8.5 մ երկարությամբ և ցածր հատակով, հայտ է տրվել: Բացի այդ, «EBRD» հետ համատեղ 100 ավտոբուսի համար՝ 12 մ երկարությամբ, եվրովեց և եվրոհինգ ստանդարտներով արդեն հայտարարվել է մրցույթ: Մեզ ապահովագրելու համար մրցույթը կանցկացվի եվրովեց ստանդարտով, մասնակից չլինելու դեպքում ուժի մեջ կմտնի եվրոհինգ ստանդարտով մրցույթը, որի մասնակիցները հավանաբար ավելի շատ կլինեն և մրցույթի անցկացման հավանականությունը մեծ կլինի: Ավտոբուսների ճիշտ շահագործման նպատակով մեծ աշխատանք է կատարվում ինֆրաստրուկտուրայի, փողոցների և կայանների, ավտոբուսների ներքին կահավորման, վարորդների համալրման հետ կապված:

### **Պավել Սարգսյան**

-Պարոն քաղաքապետ, այսինքն նախանշած ժամկետների մեջ, եթե մրցույթները կայանան, ապա այս տարի ամբողջ խմբաքանակը կհամալրվի, իսկ եթե ոչ, ապա կտեղափոխվի 2022թ.:

### **Հայկ Մարության**

-Աշխատանքները բարեհաջող ընթանալու դեպքում այս տարի միկրոավտոբուսներ չենք ունենա:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն անդամ Արմեն Գալջյան:

### **Արմեն Գալջյան**

-Քանի որ այսօր հայտարարություն է տարածվել մանկապարտեզների ընդունելության կարգի հետ կապված, ցանկանում եմ հարցի միջոցով հնարավորություն ստեղծել ևս մեկ անգամ այս հարթակից տեղեկատվություն տրամադրել ընդունելության կարգի վերաբերյալ:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքում Մելքումյանը:

### **Գայանե Մելքում Մելքումյան**

-Մանկապարտեզներում ընդունելություն կազմակերպելու հարցն այժմ շատ սրված վիճակում է՝ կորոնավիրուսային հիվանդության սահմանափակումներով պայմանավորված 2020-2021 ուստարում ընդունելություն չի կազմակերպվել, քանի որ պահանջներն այդպիսին են եղել: Այս առումով քաղաքապետարանը հանձնարարական կատարող է եղել և ենթարկվել է սահմանված սահմանափակումներին: Դրա հետևանքով հերթագրումները գրեթե կրկնապատկվել են, ինչպես նաև վերաբացումից հետո երեխաների մի մասը, ովքեր նախկինում հաճախում էին մանկապարտեզ չեն կարողացել կրկին վերադառնալ մանկապարտեզներ և նրանց նախադպրոցական կրթությունը ընդհատվել է: Այս պահի դրությամբ մենք ունենք մոտ 3000 երեխա, ովքեր նախկինում հաճախել են և այժմ չեն կարողանում հաճախել և 12.000-ից ավելի հերթագրված երեխաներ, որոնց տարիքը համապատասխանում է մանկապարտեզ հաճախելու տարիքին:

Մենք նախաձեռնել ենք հանդիպում սահմանափակումներ սահմանող համապատասխան գերատեսչությունների հետ, առաջին հերթին՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ: Խնդիրը և բոլոր հնարավոր փաստարկները ներկայացրել ենք, որոնք մենք գիտենք և բնակչությունն անընդհատ բարձրաձայնում է: Արդյունքում կարողացել ենք հասնել մի այնպիսի կոնսենսուսի, որ մի փոքր մեղմացվել է սահմանափակումը: Առաջիկա օրերին սպասում ենք վերջնական որոշման հրապարակմանը, համաձայն որի՝

թույլատրվելու է խմբերում ընդգրկել առավելագույնը 20 երեխա: Այս պահի դրությամբ այդ թիվը 18 է, սակայն այս թվին զուգահեռ գործում է նաև երեխաների միջև որոշակի հեռավորություն պահպանելու սահմանափակում: Քանի որ մանկապարտեզների խմբասենյակներն ունեն հստակ չափեր և տարբերվում են մեկը մյուսից, ուստի՝ ոչ միշտ է հնարավոր խմբասենյակներում ապահովել 18 երեխայի ներկայությունը: Այժմ 20 երեխայի պարագայում փորձում ենք ելքեր գտնել, որպեսզի կարողանանք, խմբասենյակներում դասավորությունը փոխելու միջոցով, հազեցնել առկա խմբերը: Այս փոփոխությունը փոքր քայլ է, որը սակայն թույլ չի տա մեզ նոր խմբեր ընդունել, բայց առկա խմբերում քիչ քանակի երեխաներ կկարողանանք ավելացնել:

Մենք որոշում ենք կայացրել ընդունելությունը կազմակերպել հետևյալ կերպ՝ վերընդունելու ենք այն երեխաներին, ովքեր սպասում են շարունակելու իրենց կրթությունը և հերթագրումներում ընդգրկվածներից որոշ երեխաներ: Թիվը մեծ չի լինելու, այս պահին թվեր հրապարակել չեն ուզում: Ամեն դեպքում շարունակում ենք մեր բնակցությունները և մեզ խոստացել են, որ եթե փետրվար ամսին համաճարակի վիճակը կտրուկ չսրվի, կարող ենք ևս լրացուցիչ մեղմացումների մասին քննարկել:

Առիթն օգտագործելով՝ հայցում եմ մեր բնակչության ըմբռնումը: Երևանի քաղաքապետարանն ամենօրյա ռեժիմով զբաղվում է այս հարցով: Մեր լիազորություններից և հնարավորություններից վեր է շրջանցել լիազոր մարմնի սահմանած սահմանափակումները և պարտավոր ենք այդ խմբերում երեխաների համապատասխան խմբաքանակը պահպանել, և սա պատճառ է հանդիսանում, որ չենք կարող նոր երեխաներ ընդունել:

**Արմեն Գալջյան**

-Շնորհակալություն:

**Հայկ Մարության**

-Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 1-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝ Ա. Եփրիկյան